

## Տ. ԿԻՐԱԿՈՍ ՔԱՀԱՆԱ ԱՂՈՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Լևոն)

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 2-ին Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի համար 2 և 11 միջնակարգ դպրոցներում:

1992-1997 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

1998-2000 թթ. ազատ ունկնդրի կարգավիճակով սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. ապրիլի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը և Հայ Ազատագրական Շարժումը» թեմայով:

2000 թ. օգոստոսից ծառայության է անցել Արագածոտնի թեմում որպես հոգևոր պետ:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երևման Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: